

1.4.2. Բնակչության դրամական եկամուտներ և ծախսեր, աշխատավարձ և այլ եկամուտներ

Բնակչության դրամական եկամուտների և ծախսերի հաշվեկշիռը¹: Բնակչության դրամական եկամուտները 2003թ. հունվարին կազմել են 50225.9 մլն.դրամ, իսկ դրամական ծախսերը²՝ 64599.9 մլն.դրամ: Դրանց աճի տեմպերը 2002թ. հունվարի համեմատ համապատասխանաբար կազմել են 105.8% և 95.9 %:

Բնակչության իրական տնօրինվող դրամական եկամուտները: Բնակչության իրական տնօրինվող դրամական եկամուտները (եկամուտները՝ հանած պարտադիր վճարումները, հաշվի առած սպառողական գների ինդեքսների փոփոխությունները) 2003թ. հունվարին 2002թ. հունվարի նկատմամբ նվազել են 8.9%-ով:

Բնակչության դրամական եկամուտների օգտագործման կառուցվածքը

	Տեսակարար կշիռը եկամուտներում		2003թ. հունվարի աճի տեմպը 2002թ. հունվարի նկատմամբ	Տեսակարար կշռի տոկոսային փոփոխություն
	2002 հունվար	2003 հունվար		
Դրամական եկամուտներ	100	100	95.9	-
<i>որից օգտագործվել է</i>				
ապրանքների գնման և ծառայությունների վճարման համար	82.7	97.9	113.5	15.2
պարտադիր վճարումների և կամավոր նուծումների համար	4.4	5.5	121.1	1.1
ավանդների և արժեթղթերի ձևով խնայողությունների հավելած	2.0	-7.9	-373.3	-9.9
արտարժույթի գնում ²	19.3	23.8	118.3	4.5
այլ ծախսեր	8.1	9.3	109.4	1.2
Դրամական ծախսեր	116.5	128.6	105.8	12.1
<i>եկամուտների գերազանցում ծախսերի նկատմամբ</i>	<i>-16.5</i>	<i>-28.6</i>	<i>34.2</i>	<i>-12.1</i>

Աշխատանքի վարձատրություն: 2003թ. հունվարին, ըստ յուրաքանչյուր ամիս վիճակագրական հաշվետվություն ներկայացնող մոտ 9000 սուբյեկտների հաշվետվությունների նախնական տվյալների գնահատման, զբաղվածների միջին անվանական աշխատավարձը կազմել է 27732 դրամ և 2002թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավելացել՝ 17.7%-ով: Ընդ որում, բյուջետային կազմակերպություններում զբաղվածների աշխատավարձը, որի գնահատումը կատարվել է մոտ 4000 բյուջետային կազմակերպություններից ստացվող եռամսյակային հաշվետվությունների օպերատիվ տվյալների հիման վրա, կազմել է 17242 դրամ և 2002թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ՝ ավելացել 19.4%-ով, իսկ ոչ բյուջետային կազմակերպություններում զբաղվածներինը՝ համապատասխանաբար 37264 դրամ և աճել՝ 17.1%-ով:

¹ Ցուցանիշի հաշվարկը կատարվում է դրամարկղային եղանակով:
² Ցուցանիշի հաշվարկման մեջ մեթոդաբանական փոփոխություն է կատարվել: Բնակչության դրամական ծախսերում արտարժույթի սալդոյի փոխարեն կիրառվել է արտարժույթի գնման ցուցանիշը:

Անվանական միջին աշխատավարձի փոփոխությունը նախորդ տարվա նկատմամբ և տատանումն ըստ տնտեսության ճյուղերի 2002թ. դեկտեմբերին

	Անվանական միջին աշխատավարձը, դրամ		% -ով ընդամենի նկատմամբ		% -ով նախորդ տարվա նկատմամբ	
	դեկտեմբեր	հունվար-դեկտեմբեր	դեկտեմբեր	հունվար-դեկտեմբեր	դեկտեմբեր	հունվար-դեկտեմբեր
Ընդամենը	31967	23987	100.0	100.0	113.0	110.1
Արդյունաբերություն	54026	35822	169.0	149.3	119.8	113.5
Գյուղատնտեսություն	23889	17819	74.7	74.3	126.2	112.7
Անտառտնտեսություն	14417	11420	45.1	47.6	115.6	124.6
Տրանսպորտ	48691	41821	152.3	174.3	106.4	103.6
Կապ	68830	45725	215.3	190.6	135.5	118.4
Շինարարություն	50565	39096	158.2	163.0	114.2	113.8
Առևտուր, հանրային սնունդ	20854	11967	65.2	49.9	183.4	164.8
Բնակարանային-կոմունալ տնտեսություն, կենցաղսպասարկում	44978	28125	140.7	117.3	135.3	130.9
Առողջապահություն, ֆիզկուլտուրա և սոցիալական ապահովություն	13599	12945	42.5	54.0	101.2	100.0
Կրթություն	14726	12459	46.1	51.9	111.5	113.6
Մշակույթ	13088	10456	40.9	43.6	116.8	106.5
Արվեստ	15048	11607	47.1	48.4	104.1	109.4
Գիտություն և գիտական սպասարկում	29162	18397	91.2	76.7	126.6	117.8
Վարկավորում և ապահովագրություն	135046	98732	422.5	411.6	114.8	105.8
Կառավարման ապարատ	58603	36034	183.3	150.2	100.9	107.8
Այլ	37121	24448	116.1	101.9	122.1	107.6

2002թ. դեկտեմբերին սոցիալական ոլորտի ճյուղերում զբաղվածների անվանական միջին աշխատավարձը տատանվել է ընդհանուր միջինի 40.9%-ից (մշակույթ) 47.1%-ի (արվեստ) սահմաններում: Վարկավորման համակարգում անվանական միջին աշխատավարձն ընդհանուր միջինին գերազանցել է 4.2 անգամ, կապի ոլորտում՝ 2.2, կառավարման համակարգում 1.8, արդյունաբերության մեջ՝ 1.7, շինարարության մեջ՝ 1.6, տրանսպորտում՝ 1.5 և բնակարանային-կոմունալ տնտեսության և կենցաղսպասարկման ոլորտներում՝ 1.4 , այլ ճյուղերում՝ 1.2 անգամ: